ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-22/10/Բ/13/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Կոստյում /բաճկոն, տաբատ, կեպիով, սև գործվածքից/: Կտորի բաղադրությունը 51% բամբակ 49% պոլիէսթեր APT.-4c5-KB, 210գ մակերեսային խտությամբ, աստառը՝ սև բամբակյա գործվածքից:Բաճկոնի կենտրոնում տեղադրված է պլաստմասե շղթա՝ կափույրով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ՝ կպչուն ժապավեններով, որոնք տեղակայված են կրծքամասում, 75 աստիճան դեպի ներս թեքությամբ: Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են կպչուն ժապավենով: Ձախ թևքի գրպանի վրա կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, իսկ աջ թևքի գրպանի վրա կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի թևքանշան: Թևքանշանները ասեղնագործած,միաձույլ, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Թևքերը բազկակալում կոճկվում են կպչուն ժապավենով: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է ««POLICE»» (3սմ լայնությամբ, 12սմ երկարությամբ) մակագրությամբ, թիկունքին՝ ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ՁՈՐՔԵՐ»» (8սմ լայնությամբ, 29սմ երկարությամբ) մակագրությամբ կտորներ (սև երանգի կտորի վրա ասեղնագործված)՝ կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, պլաստմասե շղթայով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ: Գոտին մշակված է 7 գոտեմակօղակով

	և գոտու չափը կարգավորող ձգված էլաստիկ ժապավենով: Կողքերից մշակված են կպչուն ժապավենով կոճկվող կափույրով ծավալուն եռաձալ վրադիր գրպաններ: Տաբատի առաջամասում մշակված են քառանկյուն ծնկակալներ: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից: Տաբատի փողքերի ներքնամասում կարվում է փողքերը կարգավորող կպչուն ժապավեներ: Կեպին – բաղկացած է սև գործվածքով կոշտ հովհարից, կողամասերից և հատակից: Հետևամասում առաձգական ժապավեն՝ կտորով մշակված: Աստառը՝ բամբակյա կտորից: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ ոստիկանության փոքր գլխարկանշանը: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6 քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-22/10/Բ/13/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	